



Խ Ս Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՄԻԶԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Եպտեմբեր ամսի վերջերին, Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Տ. Աքենագորաս Արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ, Հոռոոս կղզում կայացավ Օրթոդոքս Եկեղեցիների համագումար, որին մասնակցելու հրավիրվել էր նաև Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարեկան կարգադրությամբ, նառուն Հայ Եկեղեցու, որպես դիտորդ-հյուր, համագումարին ներկա եղավ Արևմտյան Եկեղեցայի հայոց Հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ գերաշնորհ Տ. Անրովը եպիսկոպոս Մանուկյանը:

Նոյեմբեր ամսի կեսերին, Նյու-Յունիոնում, գումարվելու է Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Երրորդ համագումարը, որին, հառուն Վեհափառ Հայրապետի և Հայ Եկեղեցու, կմասնակցի գերաշնորհ Տ. Թերենի եպիսկոպոս Փոլատյանը:

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին, վերջին 40—50 տարիների ընթացքում, իր սրտագին մասնակցությունն է բերել միջեկեղեցական համաօրինակ հանդիպումներին, որոնք մեծ իրադարձություններ են մեր ժամանակներում քրիստոնեական եկեղեցիների կյանքում եկեղեցական միություն հաստատելու հանապարհի վրա:

Գոհունակությամբ պետք է արձանագրել այն փաստը, որ այժմ քրիստոնյա աշխարհը մեծ հետաքրքրություն է հանդես բերում Եկեղեցիների միության հարցի շուրջ: Նույն մտածումներով է, որ Հայ Եկեղեցին մաս-

նակցել է 1927 թվականին Լոզանի, 1937 թվականին Էդինբուրգի և 1952 թվականին Լուսդի Կարգի և Հավատի ժողովներին:

1956 թվականի մարտին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ գումարված Կանիրեկ Եպիսկոպոսական ժողովը որոշում ընդունեց այսումեան ևս Հայ Եկեղեցու մասնակցության մասին միջեկեղեցական հման ժողովների «Ամենայն Հայոց Կարողիկոսի կողմից հշանակված ներկայացուցիչներով»:

Միջազգային կյանքում ժողովուրդների բարեկամության գարգացման մեր դարաշրջանին, անցել է Եկեղեցիների մեկուսացած, կղզիացած ապերելու ժամանակը: Եվ Հայ Ազգը ամենից ավելի գիտակից է Եկեղեցիների և կրոնների միջև անցյալում անհանդուժող ոգու տիսուր հետևանքներին:

Մեր օրերում և արդի պայմանների մեջ, միջեկեղեցական հանդիպումներն ու շփումները օգտակար են և անհրաժեշտ այն իմաստով, որ դրանք կիարատեն Եկեղեցիների միջև գոյուրյուն ունեցող նախապաշտումները, կիշրեն հավատացյալներին իրարից բաժանող անբնական պատվառները, կցրեն փոխարած կասկածամտությունները և կսեղնծեն Եկեղեցիների միջև իրահասկացողության, վստահության, սիրու և հարգանքի մթնոլորտ: Եկեղեցիների միջև որքան անկեղծ լինեն հարաբերություններն ու շփումները, այնքան կպակասեն թյուրիմացությունները և նպաստավոր ու շինարար հող կսեղնծեն ապագայում Եկեղեցական Եղմարիս միության համար ավետարանական ոգով:

Այս մտածումների լույսի տակ, միշեկեղցական հանդիպումները հանդիսանում են հուսալի սկզբանավորություններ եկեղեցական ապագա զանկալի միուրյան:

Հայ եկեղեցու սրտագին իղձն է եղել և է՝ իրականացած տեսնել քրիստոնեական եկեղեցների երբայրությունը:

Ենշպես անցյալում, այժմ էլ, Հայաստանյաց Առաքելական եկեղեցին, Մայր Արքու Ս. Եջմիածնի զիլսավորությամբ, ողջունում է այն բարի շաբեկերն ու միշեկեղեցական հանդիպումները, որոնց նպատակն է ստեղծել կայուն և վստահելի հող ապագա եկեղեցական միուրյան, «ՄՌԱՅԱՆՈՒԹԻՒՆ» ՀՈԴԻՈՒՆ ՅՈՒԻՆԻ ՅՈՒՂԱՂՈՒԹԵԱՆ» (Եփես. Դ 3): Հայ եկեղեցին ամեն օր, երեկոյան ժամերգության ընթացքում, սրտեռանդն աղորում է «ՄԻԱՅՆՈՅ ՍՈՒՐԲ, ԿԱԹՈՒՂԻԿէ եթ ԱՌԱՔԾԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ» միուրյան վերականգնման և համագործակցության համար:

Արդարեւ, ՄԵԿ է Քրիստոնեական եկեղեցին իր Գլխավ, որ է Քրիստոս, ՄԵԿ է իր հավատով. «ԱՌԱՔԾԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՔ ԹԼՊԻՏ ԵՒ ԸՆԴ ԲԱԶՈՒՄ ՏԵՂԻՍ ԵՆ, ՍԱԿԱՅՆ ՄԻ ԱՄԻՎԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՅԱՒԱՏՈՅՆ» (Անձացի): Քրիստոնեական եկեղեցին ՄԵԿ է իր ՀՈԴԻՈՒ, ՄԵԿ է իր ԿՈՂՈՒՄՈՎ և ԱՌԱՔԾԵԼՈՒԹՅԱՄՔ. «ԵԹԻ ԲԱԱՒԻՆՔ ՇՆՈՐՀԱՑ ԵՆ, ԱՅՆ ՀՈԴԻՆ ՆՈՅՆ Է» (Ա. Կորեք. Ժ 4): Քրիստոնեական եկեղեցին ՄԵԿ է իրը ՀՈԴԻՎՈՐ ԱՄՐՈՂ-ԶՈՒԹՅՈՒՆ, որպես ՔՐԻՄԾՈՎԻ ՄԱՐՄԻՆ.

«Մի մարմին եմք ի Քրիստոս, այլ իրավանշիր միմեանց անդամ» (Հոռմ. Ժ 3):

Քրիստոնեական Ընդհանուր եկեղեցու միուրյունը խախտվեց նեխոսով գ տիեզերական ժողովից հետո, 451 թվականին, երբ հոգվեցին պատրիարքական Արքուների գերազանչության հարցերը:

Քրիստոսի ՄԵԿ եկեղեցին բաժանվեց բազում ՄԱՍՍԻՒ: Ստեղծվեցին տեղական, ազգային եկեղեցներ, հանախ միմյանց հակառակ և թշնամի դավանաբանական հաւրեցում: Եկեղեցիների բաժանումներն ու պահակումները ժխտում իսկ են եկեղեցու կոչման, էուրյան և առաքելության: Եղարի Հայ եկեղեցու շահանգործ մատենագիր Մովսես Խորենացին վշտով է գրում եկեղեցու ծցում ստեղծված պայքարների մասին, «Մարտ ի ներքուստ... Վրդովեցաւ ուղղափառութիւն, արմատացաւ անկարգութիւն»: Կրոնական-դավանական հողի վրա այսուետև սկսվեց տխուս պայքար բաժանված եկեղեցիների միջև: Հայ եկեղեցին միշտ է սրտի ճամանակ և առաջանաւության առաջարկներ, ժամի անգամ որ իրեն եերկայացված են, բայց միշտ հեռացնուծ չէ յուր ինքնուրույն և առանձինահատուկ կացության դիրքեն: Հայոց եկեղեցին միաբանությունը հասկցալ միշտ բանին նիշու և սեղմ հշանակությամբ: Խամ միաբանություն բօխով ուզեց եկեղեցիներու միևնուական հաղորդակցություն, փոխադարձ հարաբերություն և իրար դիրքին հանդիպ հարգանք. յուրաքանչյուրին համար յուր շրջանակին և սահմաններուն մեջ ազատություն և ամենուն վրա պիտապեսող քրիստոնեական սուրբ սերբ նա երեխ շուգեց հանդութել, ու միաբանությունը տիրապետության փոխի և մարդությունն վերածվի («Հայ եկեղեցի», է 80):

Կաթոլիկ եկեղեցիների միուրյան բնագալառում: Մեր եկեղեցական մատենապրուրյան մեջ կան ՄԻՈՒԹՅԱՆ հՆԴՐԻՆ հԱՄՐՎԱԾ մի շարք գրություններ, որոնք առանձին մեծ հշանակություն ունեն քրիստոնեական եկեղեցների միուրյան պատմության համար:

Եկեղեցական միուրյան ջերմ, անկեղծ պաշտպաններից մեկն է եղել Հու Եկեղեցու լայանախուն և ազատամիտ հայրապետներից Ս. Ներսոս Շնորհալին (1168—1173), որը հուաց ԻԻԻ-Էմմանուլի կայսեր հետ պաշտպանական հարաբերությունների մեջ մտավ, և գրեց իր «Գիր հաւատոյ խստվանուրեան Հայաստանեայց եկեղեցոյ», և «Սահմանն հաւատոյ Հայաստանեայց եկեղեցոյ... ի խելորյա աստուածասեր քաջատրին Հոռուսականուէլի» («Ենդիմանական»):

Այս երկու պաշտոնական բրդերում, ոռոն միջէն այժմ պահում են իրենց կանական ուժն ու նեղինակություններ, ներսու Շնորհալի հայրապետը շարադրել է հանգամանութեն և սպառիչ կերպով Հայ եկեղեցու դիրքը և սկզբունքը եկեղեցական միուրյան հարցում լիդիանապես, «Յաղաք աստուածային սրբոյ հաղորդութեան և ոչ իր ի մոլուսութեն դառնալով ի հշմատութիւն»:

ԺԹ դարի Հայ եկեղեցու հշանավոր զեմք, Կոստանդնուպոլիսի հուող պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օթմանյանը, իր 1911 թվականին գրած արծինավոր «Հայ եկեղեցի» աշխատության մեջ սասանձին գրուի է հայրելի եկեղեցական միուրյան հարցերին, ու գրու է հետևյալը. «Հիրավի պետ է զարմահալ, երբու որ դիմու Հայոց եկեղեցվոյնց ընթացքը. մեկ կողմեն միուրյանուրյան համար առանձ ծեռակիները, և մյու կողմեն յուր գուլանուրյան լրա հաստատամտությունը: Իրու ալ առեղծվածական պետ է սեպի այդ բնարացքը, երե նկատի շատնիւ անոր գերազանցապիս բույառու և ներգամմիտ ուղղություններ: Հայ եկեղեցին միշտ բարեմանագիր են, բայց միշտ հեռացնուծ չէ յուր ինքնուրույն և առանձինահատուկ կացության դիրքեն: Հայոց եկեղեցին միաբանությունը հասկցալ միշտ բանին նիշու և սեղմ հշանակությամբ: Խամ միաբանություն բօխով ուզեց եկեղեցիներու միևնուական հաղորդակցություն, փոխադարձ հարաբերություն և իրար դիրքին հանդիպ հարգանք («Հայ եկեղեցի», է 80):

Այս է եղել և է Հայոց եկեղեցու դիրքը Շնորհական սկզբունքով և Օրմանյանի բացատրությամբ՝ եկեղեցական միուրյան հարցում:

Այժմ արդեն նոր ժամանակներ են: 1961 րվականի հունիսին, երբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Ստամբուլում, Ֆենքի Հունաց Պատրիարքարանում հանդիպում էր Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Մրուրյուն Արքեպօքասի հետ, վերջինս ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետին, ասում էր.

«Ձերդ Մրուրյունը կնանշեանք Ձեր ընտրության րվականնեն սկսյալ, աեղյակ ենք Ձեր աշխատություններուն և զգացումներուն, մասնավորապես Երիտրոնյա եկեղեցիներու համագործակցության և միացման հարցին մեջ Ձեր ունեցած կարծիքներուն: Այս բոլորի համար զանգ սրբազն կշնորհակություն: Մեր երկու եկեղեցիները նույն համար քառ տար են, դարձեն լուսավորին: Երբեմն եթե ՊԱՐԵՐՈՒ ԸՆԹԱՅՑՔին: Երբեմն եթե ՊԱՏԱՀԱՆ ԻՆ ՄՇՈՒՇՈՍ ՊԱՀԵՐ, ԱՆՈՒԹ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԱՐԴՆԱԱՄ Են եկ ԱՅՍՈՐ ՈՐԵՎէ ԻՄԱՍՏ Ձեն ԿՐԵԲ»:

Ամենայն Հայոց Կարողիկուր Հունաց Տիեզերական Պատրիարքի խոսքներին պատասխանում է հետեւյալ հատկանշական բառերով.

«ԶԵՐԴ ՄՐՈՈՒԹՅԱՆ ԱՅՍ ԽՈՍՔԵՐԸ ՊԻՏԻ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՄՐՏԻՆ ՄԵԶ ԻԲՐԵՎ ԹԱՆԿԱԳԻՆ ԸՆԺԱ: ԱՅՍՈՐՎԱՆ ՀԱՆԴԻՊՈՒԹՅԸ ԱՊԱՀՈՅԱՅ ԸՆԺԱ: ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՔԱՐԸ ՊԻՏԻ ԸՆԺԱ: ԱՍՈՒՆԾՈ ԱՆՈՒՆԾ ԵՐԱԽՏԱԳԻՑՅՈՒԹՅՈՒԹՅԱՄ ԿՀԵՑԵՆՔ, ՈՐՈՎՀԵՏԵՎ ՄԵԶԻ ՊԱՐԴԵՑ ԱՅՍ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ»:

Վազգեն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրոք, Հայաստանյաց Առաքելական եկեղեցին, Երիտրոննեական սիրո և հարգանքի բրոնեումով, շատ սիրայիր և բարեկամական հարաբերություններ է մշակում առնասարակ Օրբողոք եկեղեցիների և ի մասնավորի մոտ Պրավուլավ եկեղեցու հետ:

1956 թվականին, երբ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը գտնվում էր արտասահմանում, Անգլիայի հայ համայնքին տված եր ացելության օրերին, զրադիք են Հայ և Անգլիան եկեղեցիների փոխմարդության ամրացման և սերտացման հարցու ու գրույցներ ունեցալ Քենսորերի Մրելապիսկոպոսի հետ: Լոնդոնում, Նիկիական միուրյան ակումբում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի պատվին կազմակերպված պաշտոնական բնողության ժամանակ, նորին Ս. Օծուրյունը եկեղեցական միուրյան մասին արահայտությունները նետելով ԱՊԱՅՑՐԱԿԱՆ ՄԵՐԶԵՑՈՒՄՈՎ եկ ԳՈՐԾԱԿՑՈՒ-

ԲՅԱՄԲ, ԽՈՐՃՈՒՄ ԵՆՔ, ԹՅ ՋՈՐԱՅՐԱՇ ԿՎԵՆԵՆՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԵԿԵՂԵՑԻՆ:

Հայ և Անգլիան եկեղեցիների հարաբերությանց զարգացման և ամրապնդման ասպարեզում կարևոր դեր է կատարում նաև Երուսաղեմի հայոց Պատրիարքությունը: Երաւանական միարանության և Երուսաղեմի Սննդիկան եկեղեցու միջև վաղուց հասած վականի հարաբերություններ, «ՈՐՈՇ ԱՐԴՅՈՒՆ ԱՎԱՆԴՈՒՄՆԵՐ ՄԻ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՆ ԳԱՐՄՉԵԼ», — նշում է Ամենայն Հայոց Հայրապետը:

Նույն մտածումներով, Հայաստանյաց Առաքելական եկեղեցին մեծապես հետաքրքրվում է եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գործունեությամբ, որն աշխատում է գործնական հողի վրա և Երիտրոննեական ոգով միուրյուն ստեղծել եկեղեցիների միջև:

Դժբախտաբար անցյալում նախապայառումներ, անհասկացողություններ, Երիտրոննեական սիրո և ներողամտության պակասը բանձր գարգույններ են տաշել Երիտրոննեական եկեղեցիների միջև, արգելի են նաև դիսացել համագործակցության և միուրյան և խանգարել են երկրի վրա Երիտրոննեական սիրո թագավորություն հաստատումը:

Այժմ ժամանակն է, որ Երիտրոննեական աշխարհը համաքրիստոննեական իմաստով բոլորվի նույն սեղանի շուրջ, ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՆ ՍԵՐՈՎ ապագա եկեղեցական գործակության հիմքարը դնելու: Կարևոր չեն ոչ էլ անհրածեցտ նույնիսկ, դափնենիրնե, ծիսական և վարչական նույնություն եկեղեցիների, գործնական նույնություն կատարվելով կատարված և կամտվութակցության, միուրյան, սիրո և եղբարության համար: Թող յուրաքանչյուր եկեղեցի հավատարակի մեա իր գովաճական, ծիսական, ազգային ավանդություններին, կանոնական մտածելակերպին, բայց միանա Քրիստոսի սիրով և գործնական նշանակություն ունեցող հնարեւում: Եկեղեցիների միջև գոյություն ունեցող դաշտական, ծիսական, նվիրապետական տարերությունները շահետ է պատճառ դառնան, որ եկեղեցիները միասին շմտածեն, շգրծեն, շաղործեն, Երիտրոննեական բնդիանուր աշխարհ և ամբողջ մարդկությունը շահագրգոռ կենսական, հիմնական հարցերի շուրջ, ինչպիսիք են խաղաղությունը, գիւղարափումը, ազգերի համագործակցությունը և այլ հասարակական հարցեր: «Զէ բաժանեալ Քրիստոսի Պօղոս և յԱպօղոս և ոչ եկեղեցի նորա ի Հայո և ի Հոռոմ կամ ի Յուանկ, թէպէտ և ակարս ցն կարծիք այսմ ծառային» (Ղամբրոնացի):

Քրիստոնեական աշխարհը ճավատում է նկեղեցու հավիտենականությանը, անպակասալիությանը. «Ոչ ծերանոյ Եկեղեցի, ոչ նուանի և ոչ դիմամարտից յաղքանարի... դիմագրյան է արեգական շիջանի բան Եկեղեցոյ խաւարի» (Խոկերերան):

Այս մտածումների լույսի տակ, ի՞նչ է այսօր Եկեղեցու կռչումն ու առանձնությունը աշխարհում.

Եկեղեցիների միուրյան երեք չի նշանակում ինքնազուխ, աեկախ Արոռների բուժում, ազգային Եկեղեցիների վերացաւմ և ոչ է դավանական, ծիսական, վարշական մրուինականության կամ միակերպության սահմանում Եկեղեցիների մեջ, այլ բովանդակ քրիստոնեական աշխարհի մեջ և Եկեղեցիների միջև կենդանի համագործակցություն, «Միութիւն ի կարևոր, ազատութիւն յերկրայական, սէր յամենայնի» սկզբունքով:

Եկեղեցին, պատասխանատվության խորակ զգացումով դեպի հավատացյալներ, այսօր էլ պեսք է իր խոսք ասի, իր վերաբերմունք նշան աշխարհ հուզող բայց երատապ հարցերի մասին, ինչպիսիք են ազգերի համագործակցությանը, ցեղային և հասարակական տիեզարարությաններ, գաղութառհրատարակությունը, գեղարվածությունը, գեղարվածությունը, հնարական անարդարությունը: Այս աստվածանան և մարդասիրական գործում բայց Եկեղեցիները պիտի համագործակցեն միասնաբար պայքարելու հասարակաց թշնամու դեմ, ուր անհավասարությանն է, քարոյական անկումն է, հասարակության բայցայումն է, նեշտասիրությանն է և հավատի բռվացումը:

Եկեղեցիների այսօրվա միուրյան նիմնական նպատակը պիտի լինի աշխարհում ՀԱՎԱԼԻՏԻ, ԲԱՐԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ, ԱԶՆՎՈՒԹՅԱՆ, ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՄՐՈՊԵԴՈՒՄԸ, ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԿՐՈՆԻ ԲԱՐՈՅՑԱԿԱԿԱՆ ԲԱՐՁՐ ՆՈՐՄԱՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԱԳԱՆՈՒՄԸ, ԵԿԵՂԵՑՈՒ ՄԵՐՋԵՑՈՒՄԸ ՀԱՎԱՏԱՑՑԱԼ ՄԱՍՍԱՆԵՐԻ ԿԱՐԻՔ-

ՆԵՐԻՆ, ՎԵՏԵՐԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐՏԵՐԻ ՆԿԱՏՄԱՐՄՐ ԻՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔՐ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԱՄԲՈՂՋ ԱՇ-ԽԱՐՀՈՒՄ:

Եկեղեցին պեսք է վեր մես քաղաքական հակամուրտուրյաններից և աշխարհի ժողովուրդներին, քածանված ազգերին բերի միուրյան, խաղաղության, եղբայրության, սիրապատգամը, դատապարտելով այն բայց միշոցները, որոնք լարում են ժողովուրդները միշանց դեմ: Ոչ մի Եկեղեցի, ինչեւ էլ «Յօր» լինի ինքն իր մեջ, չի կարող տուանձին դիմագրավել արդիականության այս բոլոր հարցերը:

Արդարեւ, կան ու կլինեն Եկեղեցական միուրյան հանապարհի կրա խոշընդուներ, արգելիներ: Ինչպսս անցյալում, այսօր էլ Կարայիկ Եկեղեցին յուրահատուկ ծեռվ է հասկանում Եկեղեցական միուրյան հարցը: Միուրյունը պիտի լինի Ավետարանի ոգովի: Միուրյան նշանաբար հանապարհ ունետ «մեծ» Եկեղեցու փարախը մասնել չէ: Եկեղեցիները պեսք է մասնան միշանց փոխադարձ հարցանեով և հասկացողությամբ իրեւ հավատարենք. «Ոչ աիրելով վիճակացն, այլ օրինակ լինել հօտին, հաւասար ընդ հսկաւարի և ոչ էլ բնդ ծառայի»: Այս ձեռվ եղած հանդիպումները միայն կարող են նպաստովոր սոն ստեղծել ապագա Եկեղեցական միուրյան համար:

«Անա օր փրկութեան» (Յ Կորնք. Զ 2). «Անու ամ փրկութեան Եկեղել հասեալ» (Խասյի ԿԳ 4):

Մայր Արոռը միացնում է իր աղոքիների ու ջանքերը բոլոր այն ձեռնարկներին, որոնց նպատակն է քրիստոնեական եղբայրությունն ու սեր և սրտենանոն աղոթում է ապագայում իրագործվելիք նշմուրհ Եկեղեցաւան միուրյան համար: «ԱՂԱԶԵՍՅՈՒՆԻ ԶԱՄԵՆԱԿԱԼՆ ԱՍՏՈՒԱԾ ՎԱՍՆ ՄԻԱՅՆՈՅ, ՍՈՒՐԲ, ԿԱԹՈՒՆԿԻԿ ԵՒ ԱՌԱԲԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ»:

